

Ծանր սուր շնչառական վարակի (SARI) կլինիկական վարումը, երբ կասկածվում է COVID-19- հիվանդությունը:

Միջանկյալ ուղղորդում
Մարտի 13, 2020թ.



Սա այս փաստաթղթի երկրորդ հրատարակությունն է (1.2-րդ տարբերակ) SARS-CoV-2 նոր կորոնավիրուսի վերաբերյալ, որն առաջացնում է COVID-19 հիվանդությունը: Այն ի սկզբանե ադապտացված է «Ծանր սուր շնչառական վարակի կլինիկական վարումը, երբ կասկածվում է MERS-CoV վարակը (ԱՀԿ, 2019)» հոդվածից:


Այս փաստաթուղթը նախատեսված է բժշկների համար, ովքեր ընդգրկված են այնպիսի մեծահասակների, հղիների և մանկական տարիքի հիվանդների խնամքի մեջ, որոնց մոտ կա ծանր սուր շնչառական վարակի (SARI) ռիսկ, երբ կասկածվում է SARS-CoV-2 վարակ: Պեղիատրիկ հիվանդների և հղի կանանց առանձնահատկությունները շեշտվում են ամբողջ տեքստի մեջ: Տեքստը նախատեսված չէ կլինիկական դատողությունը կամ մասնագետին փոխարինելու համար, այլ՝ այս հիվանդների կլինիկական վարումը ուժեղացնելու և արդի ուղղորդում ապահովելու համար: Ներառված են վարակների կանխարգելման և վերահսկման (IPC), տրիաժի և օպտիմիզացված օժանդակ խնամքի լավագույն պրակտիկաներից քաղված խորհուրդները:


Ծանր սուր շնչառական վարակի (SARI) կլինիկական վարումը, երբ կասկածվում է COVID-19 հիվանդությունը. Միջանկյալ ուղղորդում (ուղղորդում, որը հիմնվում է առայժմ եղած տեղեկության վրա) V 1.2.


Այս փաստաթուղթը կազմված է հետևյալ բաժիններից.

1. Նախապատմություն
2. Սրբիհինգ և տրիաժ. COVID-19- ի հետ կապված SARI- ով հիվանդների վաղ ճանաչում
3. Վարակի կանխարգելման և վերահսկման (IPC) համապատասխան միջոցառումների անհապաղ իրականացում
4. Լաբորատոր ախտորոշման նմուշների հավաքում
5. Մեղմ COVID-19- ի վարում. սիմպտոմատիկ բուժում և մոնիտորինգ
6. Ծանր COVID-19- ի վարում. թթվածնաթերապիա և մոնիտորինգ
7. Ծանր COVID-19- ի վարում. համակցված վարակների բուժում
8. Ծայրահեղ ծանր COVID-19- ի վարում. սուր շնչառական դիսթրես համախտանիշ (ARDS)
9. Ծայրահեղ ծանր հիվանդության և COVID-19- ի վարում. բարդությունների կանխարգելում
10. Ծայրահեղ ծանր հիվանդության և COVID-19- ի վարում. սեպտիկ շոկ
11. COVID-19 հավելյալ բուժումներ. կորտիկոստերոիդներ
12. COVID-19 ունեցող հղի կանանց խնամք
13. COVID-19- ով նորածինների և մայրերի խնամք. Վարակի կանխարգելում/վերահսկում և կրծքով կերակրում
14. COVID-19-ով տարեցների խնամք
15. Կլինիկական հետազոտություններ և հատուկ հակա-COVID-19-յին բուժումներ
Հավելված. Երեխաների մոտ ծանր սուր շնչառական վարակների վարմանն աջակցող միջոցներ:

Այս նշանները օգտագործվում են՝ նշելու միջամտությունները.

 Կատարեք. միջամտությունը ձեռնառու է (ուժեղ խորհուրդ) **Կամ** միջամտությունը լավագույն պրակտիկաների հայտարարությունն է:

 Մի՛ արա. հայտնի է, որ միջամտությունը վնասակար է:

 Մտածեք. միջամտությունը կարող է ձեռնառու լինել ընտրված հիվանդների պարագայում (պայմանական խորհուրդ) **Կամ** զգույշ եղեք, երբ դիտարկում եք այս միջամտությունը:

Ծանր սուր շնչառական վարակի (SARI) կլինիկական վարումը, երբ կասկածվում է COVID-19 հիվանդությունը. Միջանկյալ ուղղորդում (ուղղորդում, որը հիմնվում է առայժմ եղած տեղեկության վրա) V 1.2.

Այս փաստաթուղթը նպատակ ունի բժիշկներին տրամադրել թարմացված տեղեկատվություն՝ կասկածելի և հաստատված COVID-19 հիվանդների վարումը ժամանակին, արդյունավետ և անվտանգ կազմակերպելու համար: Մեղմ ու ծանր հիվանդության համար սահմանումները բերված են Աղյուսակ 2-ում, իսկ ծայրահեղ ծանր հիվանդություն ունեցողները սահմանվում են որպես սուր շնչառական դիսթրես համախտանիշ ունեցող հիվանդներ (ARDS) կամ սեպսիս՝ օրգանների սուր դիսֆունկցիայով:

Այս փաստաթղթում եղած առաջարկությունները բխում են ԱՀԿ հրապարակումներից: Այնտեղ, որտեղ ԱՀԿ-խորհուրդներ չկան, մենք օգտվել ենք ապացույցների վրա հիմնված ցուցումներից: Հարցումների համար խնդրում ենք դիմել Էլեկտրոնային հասցեով. outbreak@who.int «COVID-19 clinical question» վերնագիրը կիրառելով:

1. Նախապատմություն

Կորոնավիրուսային հիվանդություն 2019-ը (COVID-19) նոր հայտնված SARS-CoV-2 կորոնավիրուսով պայմանավորված շնչուղիների վարակ է, որն առաջին անգամ գրանցվել է Չինաստանի Ուհան քաղաքում, 2019-ի դեկտեմբերին: Վիրուսի գենետիկական հաջորդականությունը խոսում է այն մասին, որ SARS-CoV-2-ը բետա-կորոնավիրուս է, որը սերտորեն կապված է SARS վիրուսի հետ (1):

Թեև COVID-19 ունեցող մարդկանց մեծամասնության մոտ զարգանում է մեղմ կամ առանց բարդությունների հիվանդություն, մոտավորապես 14% -ի մոտ զարգանում է ծանր հիվանդություն, որը պահանջում է հոսպիտալացում և թթվածնաթերապիա, իսկ 5% -ի մոտ անհրաժեշտ է լինում բուժում ինտենսիվ թերապիայի բաժանմունքում (1): Ծանր դեպքերում, COVID-19-ը կարող է բարդանալ սուր շնչառական դիսթրես համախտանիշով (ARDS), սեպսիսով և սեպտիկ շոկով, բազմաօրգան անբավարարությամբ՝ ներառյալ երիկամների սուր վնասում և սրտի վնասում (2): Ավելի մեծ տարիքը և համակցված հիվանդությունները հաղորդվել են որպես մահվան ռիսկի գործոն, իսկ վերջին բազմափոփոխական վերլուծությունը հաստատեց, որ բարձր տարիքը, SOFA-ի ավելի բարձր միավորը և d-dimer > 1 $\mu\text{g} / \text{L}$ -ը ընդունման պահին կապված են ավելի բարձր մահացության հետ: Այս ուսումնասիրությունը նաև ցույց է տվել, որ վիրուսային ՌՆԹ-ի հայտնաբերման միջին տևողությունը 20.0 օր է (IQR 17.0–24.0) վերապրածների մոտ, բայց SARS-CoV-2 վիրուսը հայտնաբերելի էր մինչև մահը՝ մահացածների շրջանում: Վիրուսի հայտնաբերման ամենաերկար տևողությունը 37 օր էր (3, 4) կենդանի մնացածների շրջանում:

Կան սակավ տվյալներ COVID-19-ի կլինիկական պատկերի վերաբերյալ հիվանդների առանձին խմբերում, ինչպիսիք են երեխաները և հղիները: COVID-19 ունեցող երեխաների մոտ ախտանշանները սովորաբար ավելի թեթև են, քան մեծահասակների մոտ և արտահայտվում են հիմնականում հազով և տենդով, և նկատվել է համակցված վարակ (7, 8): Համեմատաբար քիչ են գրանցվել COVID-19-հաստատված դեպքեր նորածիներին շրջանում, և նրանց մոտ հիվանդությունը մեղմ է արտահայտված եղել (9): Ներկայումս հայտնի չեն տարբերություններ կլինիկական դրսևորումների միջև:

Ծանր սուր շնչառական վարակի (SARI) կլինիկական վարումը, երբ կասկածվում է COVID-19 հիվանդությունը. Միջանկյալ ուղղորդում (ուղղորդում, որը հիմնվում է առայժմ եղած տեղեկության վրա) V 1.2.

COVID-19 հղի և ոչ հղի կանանց կամ վերարտադրողական տարիքի մեծահասակների միջև: Հղի կանայք, ում մոտ կասկածվում է կամ հաստատված է COVID-19- ը պետք է ստանան օժանդակում և բուժում, ինչպես նկարագրված է ստորև՝ հաշվի առնելով հղիության ընթացքում և դրանից հետո իմունոլոգիական և ֆիզիոլոգիական ադապտացիան:

2. Սքրինինգ և տրիաժ. COVID-19 վարակի հետ զուգորդվող սուր ծանր շնչառական վարակով հիվանդների վաղ ճանաչում:

Սքրինինգ և տրիաժ: Առողջապահության հետ շփման առաջին կետում (օրինակ՝ շտապօգնության բաժանմունք կամ ամբուլատորիա / կլինիկա) կատարեք սքրինինգ և մեկուսացրեք COVID-19-ի կասկածով բոլոր հիվանդներին: Դիտարկեք COVID-19-ի հնարավոր առկայությունը սուր շնչառական վարակ (ARI) ունեցող հիվանդների մոտ որոշակի պայմանների առկայության դեպքում (տես Աղյուսակ 1): Դասակարգեք հիվանդներին ստանդարտացված տրիաժային գործիքների օգտագնությամբ և սկսեք առաջին շարքի բուժումը:

Նշում 1: Թեև COVID-19 ունեցող մարդկանց մեծամասնությունը ունի առանց բարդությունների կամ մեղմ հիվանդություն (81%), ոմանց մոտ կզարգանա թթվածնաթերապիա պահանջող ծանր հիվանդություն (14%) և մոտավորապես 5% -ը կպահանջի ինտենսիվ թերապիայի բաժանմունքում բուժում: Ծայրահեղ ծանր հիվանդների մեծամասնության համար անհրաժեշտ կլինի թոքերի մեխանիկական վենտիլյացիա (2, 10): Ծանր COVID-19 հիվանդների մոտ ամենատարածված ախտորոշումը ծանր թոքաբորբն է:

Նշում 2: Կասկածելի հիվանդների վաղ ճանաչումը թույլ է տալիս ժամանակին նախաձեռնել համապատասխան վարակականխարգելման և վերահսկման (IPC) միջոցառումներ (տես Աղյուսակ 3): Ծանր հիվանդությամբ տառապողների, ինչպես, օրինակ, ծանր թոքաբորբի վաղ հայտնաբերումը (տե՛ս աղյուսակ 2), թույլ է տալիս օպտիմիզացված խնամք ցուցաբերել և անվտանգ, արագ ուղղորդել և ընդունել համապատասխան հիվանդանոցային բաժանմունք կամ ինտենսիվ թերապիայի բաժանմունք՝ համապատասխան ինստիտուցիոնալ կամ ազգային պրոտոկոլների:

Նշում 3. Ավելի տարեց հիվանդները և համակցված հիվանդություններ ունեցողները, ինչպիսիք են սիրտ-անոթային հիվանդությունը և շաքարախտը, ունեն ծանր հիվանդության և մահացության ռիսկի բարձրացում: Նրանք կարող են ներկայանալ մեղմ ախտանիշներով, բայց վատթարացման բարձր ռիսկ ունեն և պետք է ընդունվեն նշանակված բաժանմունք՝ սերտ մոնիթորինգի համար:

Նշում 4: Մեղմ հիվանդությունն ունեցողների համար հոսպիտալացումը կարող է չպահանջվել, եթե չառաջանա անհանգստություն արագ վատթարացման կամ հիվանդանոց անհապաղ վերադառնալու անկարողության առումով, բայց վիրուսի փոխանցումը սահմանափակելու / դանդաղացնելու նպանակով մեկուսացումը պետք է առաջնահերթություն ունենա: Բոլոր հիվանդները, որոնք խնամք են ստանում հիվանդանոցից դուրս (այսինքն `տանը կամ այլուր) պետք է հրահանգված լինեն դեկավարվել տնային ինքնամեկուսացման համապատասխան `տեղական / տարածաշրջանային հանրային առողջապահական հանձնարարականներով և վերադառնալ նշանակված COVID-19 հիվանդանոց, եթե նրանց մոտ զարգանա հիվանդության ցանկացած վատթարացում ([https://www.who.int/publications-detail/home-care-for-patients-with-suspected-novel-coronavirus-\(ncov\)-infection-presenting-with-mild-symptoms-and-management-of-contacts](https://www.who.int/publications-detail/home-care-for-patients-with-suspected-novel-coronavirus-(ncov)-infection-presenting-with-mild-symptoms-and-management-of-contacts)):

Աղյուսակ 1 Հիվանդության դեպքերի սահմանումները COVID-19-ի համար

Հավաքագրվող դեպքերի սահմանումները COVID-19-ի համար*	Կասկածելի դեպք Տե՛ս ԱՀԿ դեպքերի սահմանումները
	Հաստատված դեպք COVID-19 ինֆեկցիայի լաբորատոր հաստատմամբ մարդ՝ անկախ կլինիկական նշաններից և ախտանիշներից

* Տե՛ս [Global Surveillance for human infection with coronavirus disease \(COVID-19\)](#) վերջին սահմանումների համար

a Բժիշկները պետք է զգոն լինեն թերի իմուն համակարգով հիվանդների մոտ ատիպիկ դրսևորումների նկատմամբ:

b Կոնտակտը սահմանվում է որպես հետևյալներից որևէ մեկը

- Ուղիղ խնամքի տրամադրում COVID-19 հիվանդներին ` առանց համապատասխան անձնական պաշտպանիչ սարքավորումների (PPE):
- COVID-19 հիվանդի հետ անմիջական մոտակայքում մնալը (ներառյալ աշխատատեղ, դասասենյակ, տնային տնտեսություն, հավաքույթներ):
- COVID-19 հիվանդի հետ մոտակայքում (1 մ) ճամփորդելը ախտանիշների սկզբից հետո 14-օրյա ժամկետում, ցանկացած տեսակի փոխադրող միջոցով:

Աղյուսակ 2 Համախտանիշներ՝ կապված COVID-19-ի հետ

<p>Թեթև Հիվանդություն</p>	<p>Առանց բարդությունների ընթացող վերին շնչուղիների փրոուսային ինֆեկցիա ունեցող հիվանդները կարող են ունենալ ոչ սպեցիֆիկ ախտանիշներ, ինչպիսիք են տենդը, հոգնածությունը, հազ (արտադրությամբ կամ առանց դրա), անորեքսիա, մկանների ցավ, կոկորդի ցավ, փորկապություն, քթի փակվածություն կամ գլխացավ, հազվադեպ, հիվանդները կարող են ունենալ նաև փորլուծություն, սրտխառնոց և փսխում (3, 11-13):</p> <p>Տարեցները և ցածր իմունիտետով հիվանդները կարող են ներկայանալ ատիպիկ ախտանիշներով: Այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են օրինակ շնչարգելությունը, տենդը, ստամոքս-աղիքային ախտանիշները կամ հոգնածությունը, որոնք զարգանում են որպես հիվանդության հետևանք, սակայն կարող են համընկնել COVID-19-ի հետ:</p>
<p>Թոքաբորբ</p>	<p>Մեծահասակ, որը ունի թոքաբորբ, բայց չունի ծանր թոքաբորբի նշաններ, և չունի թթվածնաբուժության կարիք: Երեխա՝ Ոչ ծանր թոքաբորբով, ով ունի հազ, ունի շնչարգելություն + արագաշնչություն. արագաշնչություն (շնչառություն/րոպե), <2 ամս. <60; 2-11 ամս. ≥ 50; 1-5 տարի. ≥40, և ծանր թոքաբորբի նշաններ չեն նկատվում:</p>
<p>Ծանր թոքաբորբ</p>	<p>Գեռահաս կամ մեծահասակ. Տենդ կամ կասկածվող շնչառական վարակ, և հետևյալից մեկը՝ շնչառության համախտություն > 30 շունչ/րոպե; ծանր շնչառական դիսթրես; կամ SpO2 սենյակային օդում ≤ 93% (14): Երեխա, ով ունի հազ կամ դժվարաշնչություն, և հետևյալներից առնվազն մեկը. Կենտրոնական ցիանոզ կամ SpO2 <90%; ծանր շնչառական դիսթրես (օր.՝ տնրցներ, ուժեղ ներքաշումներ); թոքաբորբի նշաններ ընդհանուր վտանգավոր նշաններով՝ կրծքով կերակրման կամ խմելու անկարողություն, լեթարգիա կամ անգիտակից վիճակ կամ ցնցումներ (15): Կարող են լինել թոքաբորբի այլ նշաններ՝ կրծքավանդակի ներքաշումներ, արագաշնչություն (շնչ./րոպե). <2 ամիս. ≥ 60; 2-11 ամիս. ≥ 50; 1-5 տարի. ≥40 (16): Ախտորոշումը կատարվում է կլինիկական պատկերի հիման վրա, իսկ կրծքավանդակի նկարը կարող է բացահայտել կամ բացառել թոքային որոշ բարդություններ:</p>
<p>Սուր շնչառական դիսթրես համախտանիշ (17-19)</p>	<p>Սկիզբը. Կլինիկական վատացումից կամ նոր շնչառական ախտանիշների ի հայտ գալուց 1 շաբաթվա ընթացքում: Կրծքավանդակի պատկերում (ռադիոգրաֆիա, ԿՏ- նկար կամ թոքերի ուլտրաձայնային հետազոտություն). Երկկողմանի մթազնում, որը ամբողջովին չի բացատրվում ծավալային ծանրաբեռնվածությամբ, լուրջ կամ թոքային հյուսվածքի կոլլապսով կամ հանգույցներով: Թոքային ինֆիլտրատների ծագումը. Ծնչառական անբավարարությունը, որը ամբողջությամբ չի բացատրվում սրտային անբավարարությամբ կամ ծավալային գերբեռնվածությամբ: Անհրաժեշտ է օբյեկտիվ գնահատում (օրինակ՝ էխոկարդիոգրաֆիա)՝ բացառելու համար ինֆիլտրատների/ սպտուցի հիդրոստատիկ ծագումը, երբ չկա ռիսկային գործոն: Մեծահասակների մոտ օքսիգենացիայի խանգարում (17, 19). • Թեթև ARDS. 200 մմ Hg <PaO2 / FiO2a ≤ 300 mmHg (PEEP կամ CPAP ≥ 5 սմ H2O, կամ առանց վենտիլյացիայի) • Միջին ARDS. 100 mmHg <PaO2 / FiO2 ≤ 200 mmHg (PEEP ≥ 5 cmH2O- ով կամ առանց վենտիլյացիայի) • Ծանր ARDS. PaO2 / FiO2 ≤ 100 mmHg (PEEP ≥ 5 սմ H2O- ով կամ առանց վենտիլյացիայի) • Երբ PaO2- ը մատչելի չէ, SpO2 / FiO2 ≤ 315- ը խոսում է ARDS-ի մասին (ներառյալ վենտիլյացիա չպահանջող հիվանդներին): Երեխաների մոտ օքսիգենացիայի խանգարում. <իշխր OI = օքսիգենացիայի ինդեքս, իսկ OSI = օքսիգենացիայի ինդեքս՝ օգտագործելով SpO2: Օգտագործեք PaO2- ի վրա հիմնված չափումները, երբ հնարավոր է: Եթե PaO2- ը մատչելի չէ, սպա նվազեցրեք FiO2- ը այնքան, որ պահպանվի SpO2 ≤ 97% -ը՝ OSI- ի կամ SpO2 / FiO2 հարաբերակցությունը հաշվարկելու համար: • Երկմակարդակ-bilevel (NIV-ոչ ինվազիվ վենտիլյացիա կամ CPAP) ≥ 5 cmH2O դեմի ամբողջական դիմակի միջոցով՝ PaO2 / FiO2 ≤ 300 mmHg կամ SpO2 / FiO2 ≤ 264 • Թեթև ARDS (ինվազիվ վենտիլյացիա պահանջող). 4 ≤ OI <8 կամ 5 ≤ OSI <7.5 • Միջին ARDS (ինվազիվ վենտիլյացիա պահանջող). 8 ≤ OI <16 կամ 7.5 ≤ OSI <12.3 • Ծանր ARDS (ինվազիվ վենտիլյացիա պահանջող). OI ≥ 16 կամ OSI ≥ 12.3:</p>
<p>Մեկայիս (5, 6)</p>	<p>Մեծահասակներ. Օրգանների կենսականորեն վտանգավոր դիսֆունկցիան, որը առաջացել է կասկածվող կամ ապացուցված վարակի հանդեպ տիրոջ օրգանիզմի անհամաչափ պատասխանի հետևանքով:^b Օրգանների դիսֆունկցիայի նշանները ներառում են խանգարված գիտակցություն, դժվարաշնչություն կամ արագաշնչություն, թթվածնի ցածր աստիճան, միզարտադրության նվազեցում (5, 20), տախիկարդիա, թույլ անոթազարկ, սառը վերջույթներ կամ այրյան ցածր ճնշում, մաշկի մարմարանման երանգ կամ կոագուլոպաթիայի լաբորատոր ապացույց, թրոմբոցիտոպենիա, աջիդոզ, բարձր լակտատ կամ հիպերբիլիրուբինեմիա: Երեխաներ. Կասկածելի կամ ապացուցված վարակ և թվով ≥2 տարիք-սպեցիֆիկ համակարգային բորբոքային համախտանիշի չափանիշներ, որոնցից մեկը պետք է լինի անտրմալ ջերմաստիճանը կամ լեյկոցիտների քանակը:</p>
<p>Մեկտիկ շուկ (5, 6)</p>	<p>Մեծահասակներ. <եղուկների տրմամբ չտվվող հիպոթենզիա, երբ վազոպրեսորներ են պահանջվում պահպանելու համար MAP ≥ 65 mmHg և շիճուկ լակտատի մակարդակ> 2 մմոլ/L: Երեխաներ. Ցանկացած հիպոթենզիա (SBP <5-րդ պերցենտիլից կամ> 2 SD տարիքային նորմայից ցածր) կամ հետևյալից երկու կամ երեք՝ խանգարված գիտակցություն; տախիկարդիա կամ բրադիկարդիա (HR <90 bpm կամ> 160 bpm նորածինների մոտ և HR <70 bpm կամ> 150 bpm երեխաների մոտ); երկարաձգված մազանոթային վերադարձ (> 2 վրկ) կամ թույլ անոթազարկ; տախիպնոե; մարմարանման կամ սառը մաշկ կամ պետեխիալ կամ պուրպուրայի տիպի ցան; բարձրացած լակտատ; օլիգուրիա; հիպերթերմիա կամ հիպոթերմիա(21.):</p>

a If altitude is higher than 1000 m, then correction factor should be calculated as follows: PaO2/FiO2 x barometric pressure/760.
b The SOFA score ranges from 0 to 24 and includes points related to six organ systems: respiratory (hypoxemia defined by low PaO2/FiO2); coagulation (low platelets); liver (high bilirubin); cardiovascular (hypotension); central nervous system (low level of consciousness defined by Glasgow Coma Scale); and renal (low urine output or high creatinine).
Sepsis is defined by an increase in the sepsis-related SOFA score of ≥ 2 points. Assume the baseline score is 0 if data are not available (22).
Abbreviations: ARI acute respiratory infection; BP blood pressure; bpm beats/minute; CPAP continuous positive airway pressure; FiO2 fraction of inspired oxygen; MAP mean arterial pressure; NIV non-invasive ventilation; OI Oxygenation Index; OSI Oxygenation Index using SpO2; PaO2 partial pressure of oxygen; PEEP positive end-expiratory pressure; SBP systolic blood pressure; SD standard deviation; SIRS systemic inflammatory response syndrome; SOFA sequential organ failure assessment; SpO2 oxygen saturation.

3. Վարակի կանխարգելման և վերահսկման (IPC) համապատասխան միջոցառումների անհապաղ իրականացում

IPC- ը հիվանդների կլինիկական վարման կարևորագույն բաղկացուցիչ մասերից է և կան ԱՀԿ ուղեցույցներ (<https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019/technical-guidance/infection-prevention-and-control>):

- ✔ Նախաձեռնեք IPC- միջոցառումներ հիվանդի հիվանդանոց մտնելու պահին: Սքրինինգը պետք է իրականացվի շփման առաջին կետում՝ շտապօգնության բաժանմունքում կամ ամբուլատորիաներում/ կլինիկաներում: Կասկածելի հիվանդներին պետք է տրվի դիմակ և ուղղորդվեն առանձին տարածք: Պահպանեք առնվազն 1 մ հեռավորություն կասկածելի հիվանդների միջև:
- ✔ Ստանդարտ նախազգուշական միջոցները միշտ պետք է կիրառվեն առողջապահական հաստատությունների բոլոր հասվածներում: Ստանդարտ նախազգուշական միջոցները ներառում են ձեռքերի հիգիենան և անձնական պաշտպանիչ սարքավորումների օգտագործումը (PPE), երբ կա հիվանդների այդպիսի հետ, արտադրության (ներառյալ խորխը) և վերքային մակերեսների հետ անուղղակի և անմիջական շփում: Ստանդարտ նախազգուշական միջոցները ներառում են նաև ասեղով կամ ծակող գործիքներով վնասվածքների կանխումը, անվտանգ թափոնումը, սարքավորումների մաքրումը և ախտահանումը և շրջակա տարածքների մաքրումը:
- ✔ Ի լրումն ստանդարտ նախազգուշական միջոցների, բուժաշխատողները պետք է կատարեն ռիսկի գնահատում հիվանդի հետ յուրաքանչյուր շփման ժամանակ՝ որոշելու, թե արդյոք անհրաժեշտ են լրացուցիչ նախազգուշական միջոցներ (օրինակ՝ օդակաթիլային, կոնտակտի և / կամ օդային փոխանցման):

Աղյուսակ 3. Ինչպես իրականացնել IPC միջոցառումներ կասկածելի կամ հաստատված COVID-19 վարակով հիվանդների համար

Հրահանգներ հիվանդների համար	Կասկածյալ հիվանդին տվեք բժշկական դիմակ և հիվանդին ուղղեք առանձին տարածք: մեկուսացման սենյակ, եթե առկա է: Պահպանեք առնվազն 1 մ հեռավորություն կասկածելի հիվանդների և այլ հիվանդների միջև: Հանձնարարեք բոլոր հիվանդներին ծածկել քիթը և բերանը՝ հագի կամ փոշոտցի ժամանակ անձեռոցիկով կամ առունկակով և շնչառական սեկրեցիաների հետ շփումից հետո իրականացրեք ձեռքերի հիգիենա:
Կիրառեք օդակաթիլային նախազգուշացնող միջոցառումներ	Օդակաթիլային նախազգուշական միջոցները կանխում են շնչառական վիրուսների մեծ կաթիլներով փոխանցումը: Օգտագործեք բժշկական դիմակ, եթե աշխատում եք հիվանդից 1 մ հեռավորության վրա: Տեղավորեք հիվանդներին առանձին սենյակներում, կամ միևնույն դիագնոզով հիվանդներին պառկացրեք մեկ սենյակում: Եթե էթիոլոգիական դիագնոզը հնարավոր չէ կայացնել, ապա խմբավորեք միևնույն կլինիկական դիագնոզով հիվանդներին, հիմնվելով էպիդեմիոլոգիական ռիսկի վրա՝ ապահովելով դիստանցիա: Շնչառական ախտահանումներով (օրինակ՝ հագ կամ փոշոտց) հիվանդի հետ սերտ կապի մեջ խնամք ցուցաբերելիս օգտագործեք աչքերի պաշտպանություն (դեմքի դիմակ կամ ակնոց), քանի որ կարող է առաջանալ սեկրետի սփռել: Մասնամասփակեք հիվանդների տեղաշարժը հաստատության ներսում և ապահովեք, որ հիվանդները բժշկական դիմակներ հագնեն, երբ իրենց սենյակներից դուրս են:
Կիրառել կոնտակտային նախազգուշական միջոցներ	Կոնտակտային նախազգուշական միջոցները կանխում են ուղղակի կամ անուղղակի փոխանցումը աղտոտված մակերեսների կամ սարքավորումների հետ շփումից (այսինքն՝ աղտոտված թթվածնի խողովակաշար / միջերեսներ): Սենյակ մուտք գործելիս օգտագործեք PPE (բժշկական դիմակ, աչքի պաշտպանություն, ձեռնոցներ և հագուստ), հեռացրեք PPE- ը, երբ դուրս եք գալիս և կիրառեք ձեռքի հիգիենա՝ PPE- ի հեռացումից հետո: Հնարավորության դեպքում օգտագործեք մեկանգամյա օգտագործման կամ հիվանդի համար նախատեսված գործիքներ (օր.՝ ստետոսկոպ, արյան ճնշման մանժետկաներ, պլյուսոսքիմետրեր և ջերմաչափեր): Եթե սարքավորումները պետք է բաժանվեն հիվանդներին, մաքրեք և ախտահանեք նախքան յուրաքանչյուր հիվանդի օգտագործումը: Համոզվեք, որ բուժաշխատողները ձեռնպահ են մնում աչքերին, քթին և բերանին դիպելուց՝ պոտենցիալ աղտոտված ձեռնոցով կամ չմշակված ձեռքերով: Խուսափեք աղտոտել շրջակա միջավայրի մակերեսները, որոնք ուղղակիորեն չեն կապված հիվանդի խնամքի հետ (օրինակ՝ դռների բռնակներ և լուսային անջատիչներ): Խուսափեք հիվանդների անտեղի տեղաշարժից կամ տրանսպորտից: Կատարեք ձեռքերի հիգիենա:
Կիրառեք օդային կանխարգելիչ նախազգուշական միջոցներ, երբ կատարում եք աերոզոլ-առաջացնող գործողություններ	Համոզվեք, որ աերոզոլ գեներացնող պրոցեդուրաներ իրականացնող բուժաշխատողները (օր.՝ շնչուղիների բաց ներծծում, ինտուբացիա, բրոնխոսկոպիա, սրտանոթային վերակենդանացում) օգտագործեն համապատասխան PPE-ներ, ներառյալ ձեռնոցներ, երկարաթև զգեստներ, աչքերի պաշտպանություն և շնչառական ռեսպիրատորներ (N95 կամ համարժեք, կամ ավելի բարձր պաշտպանության մակարդակ): Դիմակի չափի պլանային ստուգումը չպետք է շփոթել օգտագործողների հերմետիկության ստուգման հետ՝ յուրաքանչյուր օգտագործումից առաջ: Հնարավորության դեպքում օգտագործեք պատշաճ օդափոխվող մի հոգանոց սենյակները, երբ կատարում եք աերոզոլ արտադրող պրոցեդուրաներ, որը նշանակում է բացասական ճնշման սենյակներ՝ նվազագույնը 12 օդի փոփոխությամբ մեկ ժամվա ընթացքում կամ առնվազն 160 L/վրկ/ հիվանդ՝ բնական օդափոխության պայմաններում գտնվող հաստատություններում: Խուսափեք սենյակում ավելորդ անհատների առկայությունից:

4. Լաբորատոր ախտորոշման համար նմուշների հավաքումը

Կա ԱՀԿ ուղեցույց նմուշների հավաքման, մշակման և լաբորատոր փորձաքննության վերաբերյալ (<https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/331138/WHO-WPE-GIH-2020.1-eng.pdf>): Բացի այդ, հարակից հարցերի վերաբերյալ կենսասանվտանգության ընթացակարգերը մատչելի են (<https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/331138/WHO-WPE-GIH-2020.1-eng.pdf>) հղումով:

- ✔ Հավաքեք արյան նմուշներ թոքաբորբ և սեպսիս առաջացնող մանրէների համար՝ ցանկալի է նախքան հակամանրէային թերապիան: ՄԻ հետաձգեք հակամանրէային թերապիան՝ արյան նմուշ հավաքելու համար:
- ✔ Հավաքեք նմուշներ վերին շնչուղուց (նազոֆարինգեալ, օրոֆարինգեալ) ԵՎ, եթե կլինիկական կասկածը պահպանվում է, իսկ վերին շնչուղիների նմուշները բացասական են, ապա նմուշներ հավաքեք ստորին շնչուղիներից(հագի հետ արտադրված խորխը, էնդոտրախեալ ասպիրատ կամ բրոնխոալվեոլյար լավաժ՝ վենտիլյացվող հիվանդի դեպքում) RT-PCR եղանակով SARS-CoV-2 թեստավորման և բակտերիալ հարուցիչների հայտնաբերման համար:
- ✔ Հաստատված COVID-19- ով հոսպիտալացված հիվանդների դեպքում կրկնակի URT և LRT նմուշները կարող են հավաքվել՝ վիրուսի կիրենսը ցույց տալու համար: Նմուշների հավաքման հաճախականությունը կախված կլինի տեղական համաճարակային բնութագրերից և ռեսուրսներից: **Հիվանդանոցից դուրս գրման համար անհրաժեշտ է կլինիկապես վերականգնված հիվանդի մոտ երկու բացասական թեստի առկայություն՝ առնվազն 24 ժամ ինտերվալով:**

Նշում 1. Օգտագործեք համապատասխան պաշտպանություն նմուշների հավաքման համար (օդակաթիլային կոնտակտային նախազգուշական միջոցներ վերին շնչուղիների նմուշների համար, օդային արտանետումներից պաշտպանող միջոցներ՝ ստորին շնչուղիների նմուշների համար): Վերին շնչուղիների նմուշները հավաքելիս օգտագործեք վիրուսային քսուքներ վերցնելու սարքեր (ստերիլ Dacron կամ ռեյոն, ոչ բամբակ) և վիրուսը տեղափոխելու միջոցներ: Նմուշառում մի կատարեք քթանցքներից կամ նշիկներից: COVID-19- ով կասկածվող հիվանդի մոտ, հատկապես թոքաբորբի կամ ծանր հիվանդության առկայության պարագայում, վերին շնչուղիների մեկ նմուշը չի բացառում ախտորոշումը, և ցանկալի են լրացուցիչ վերին և ստորին շնչուղիների նմուշներ: Ստորին շնչուղիների նմուշները ավելի մեծ հավանականությամբ դրական կլինեն և ավելի երկար ժամանակահատվածում(23): Կարելի է հավաքել միայն ստորին շնչուղիների նմուշները, երբ դրանք մատչելի են (օրինակ՝ մեխանիկական վենտիլյացիայով հիվանդների մոտ):

Թքարտադրության խրախուսումից պետք է խուսափել աներզոլային փոխանցման մեծ ռիսկի պատճառով:

Նշում 2 հղի պացիենտների համար. Միմպտոմատիկ հղի կանանց COVID-19 թեստավորմանը անհրաժեշտ է առաջնահերթություն տալ՝ մասնագիտացված խնամք ապահովելու համար:

Նշում 3. Կոմբինացված վարակները շնչառական վիրուսային և բակտերիալ այլ վարակների հետ հայտնաբերվել են SARS, MERS և COVID-19 հիվանդների շրջանում (8): Հետևաբար, ոչ SARS-CoV-2 պաթոգենի դրական թեստը չի բացառում COVID-19-ը: Տվյալ փուլում անհրաժեշտ է մանրամասն մանրէաբանական հետազոտություն բոլոր կասկածելի դեպքերում: Թե վերին, և թե ստորին շնչուղիների նմուշները կարող են փորձարկվել այլ շնչառական վիրուսների առումով, ինչպիսիք են գրիպը՝ A և B (ներառյալ գոռոզ A գրիպը), ռեսպիրատոր ստինտիցիալ վիրուսը, պարաինֆլուենցան, ռինովիրուսները, ադենովիրուսները, էնտերովիրուսներ (օրինակ՝ EVD68), մարդու մետապնեմովիրուս և էնդեմիկ մարդկային կորոնավիրուսները (այսինքն HKU1, OC43, NL63 և 229E): Ստորին շնչուղիների նմուշները կարող են փորձարկվել նաև մանրէային պաթոգենների համար, ներառյալ Legionella- ն: Մալարիայի էնդեմիկ տարածքներում տենդ ունեցող հիվանդները պետք է ստուգվեն մալարիայի կամ այլ համակցված վարակների առկայության համար, որոնք ունեն վավերացված արագ ախտորոշման թեստեր (RDTs) կամ կատարվեն արյան հաստ և բարակ քսուքներ և ապահովվի համապատասխան բուժում: Էնդեմիկ պայմաններում արբովիրուսային ինֆեկցիան (dengue / chikungunya) նույնպես պետք է հաշվի առնել չտարբերակված տենդային հիվանդության դիֆերենցիալ ախտորոշման մեջ, մասնավորապես, երբ առկա է թրոմբոցիտոպենիա:

5. Մեղմ COVID-19-ի վարում. Միմպտոմատիկ բուժում և մոնիտորինգ

- ✔ **Մեղմ հիվանդությամբ հիվանդները չեն պահանջում հիվանդանոցային պայմաններ. բայց մեկուսացումը անհրաժեշտ է վիրուսի փոխանցումը սահմանափակելու համար և կախված կլինի ազգային ռազմավարությունից և ռեսուրսներից:**

Նշում. Չնայած մեղմ հիվանդությանը հիվանդների մեծամասնությունը կարող է հոսպիտալացման կարիք չունենալ, սակայն համապատասխան կանխարգելիչ միջոցառումները պետք է կատարվեն՝ հիվանդության տարածումը դանդաղացնելու համար: Դա կարելի է կազմակերպել կամ հիվանդանոցում, եթե կան եզակի դեպքեր, կամ վերափոխված, հատուկ հաստատություններում, կամ տանը:

- ✔ **Մեղմ COVID-19-** ով հիվանդին տրամադրեք սիմպտոմատիկ բուժում՝ օրինակ, ջերմիջեցնողներ տենդի պարագայում:
- ✔ Բացատրեք այն հիվանդներին, որոնք ունեն մեղմ COVID-19՝ բարդ հիվանդության նշանների և ախտանիշների մասին: Եթե նրանց մոտ զարգանա այս ախտանիշներից որևէ մեկը, նրանք պետք է անհապաղ օգնություն փնտրեն ուղղորդման ազգային համակարգերի միջոցով:

6. Ծանր COVID-19- ի վարում. Թթվածնաթերապիա և մոնիտորինգ

- ✔ **Անմիջապես սկսեք թթվածնաթերապիա այն հիվանդներին ովքեր ունեն ծանր սուր շնչառական վարակ՝ SARI և շնչառական դիսթրես, հիպօքսեմիա կամ շոկ, և ձգտեք > 94% սատուրացիայի:**

Մեծահասակների առանձնահատկություններ. Անհետաձգելի նշաններով մեծերի մոտ (խանգարված կամ բացակայող շնչառություն, ծանր շնչառական դիսթրես, կենտրոնական ցիանոզ, շոկ, կոմա կամ ցնցումներ) պետք է ձեռնարկել շնչուղիների կառավարում և թթվածնային թերապիա վերակենդանացման ընթացքում՝ նպատակային ընդունելով $SpO_2 \geq 94\%$: Սկսեք օքսիգենոթերապիան ~ 5 լ/րոպե արագությամբ և տիտրեք, 93%-ի հասնելու համար, կամ օգտագործեք դիմակ պարկով (10–15 լ / րոպե-ով), եթե հիվանդը ծանր վիճակում է:

Հիվանդի կայունանալուց հետո թիրախը $> 90\%$ SpO_2 է մեծահասակների մոտ և 92–95% հղիների մոտ (16, 25):

Երեխաների առանձնահատկություններ. Անհետաձգելի նշաններով երեխաների մոտ (խանգարված կամ բացակայող շնչառություն, ծանր շնչառական դիսթրես, կենտրոնական ցիանոզ, շոկ, կոմա կամ ցնցումներ)

պետք է ձեռնարկել շնչուղիների կառավարում և թթվածնային թերապիա վերակենդանացման ընթացքում՝ նպատակային ընդունելով $SpO_2 \geq 94\%$: Քթային բեղիկների կամ նագալ կանյուլայի կիրառումը նախընտրելի է երեխաների մոտ, քանի որ դրանք ավելի հեշտ տանելի են:

- ✔ Ուշադիր վերահսկեք COVID-19 հիվանդներին կլինիկական վատթարացման նշանների առումով, ինչպիսիք են արագ զարգացող շնչառական անբավարարությունը և սեպսիսը, և պատասխանեք արագորեն՝ օժանդակ խնամքի միջամտություններով:

Նշում 1. COVID-19- ով հոսպիտալացված հիվանդները պահանջում են կենսական նշանների կանոնավոր մոնիտորինգ և հնարավորության դեպքում բժշկական վաղ նախազգուշացման սանդղակների (օր.՝ NEWS2) կիրառում, որոնք նպաստում են վատթարացող հիվանդի վաղ ճանաչմանը և բուժման էսկալացիային (26):

Նշում 2. Արյունաբանական և բիոքիմիական լաբորատոր հետազոտությունը և ԷՍԳ-ն պետք է իրականացվեն ընդունման ժամանակ և երբ անհրաժեշտ է կլինիկորեն՝ հայտնաբերելու համար բարդությունները, ինչպիսիք են սուր լյարդային անբավարարությունը, երիկամների սուր վնասվածքը, սրտի սուր վնասվածքը կամ շոկը:

Նշում 3. Հղի հիվանդի վերակենդանացումից և կայունացումից հետո պետք է վերահսկվի պտղի վիճակը:

- ✔ Ճշտեք հիվանդի համակցված պաթոլոգիաները՝ ծայրահեղ ծանր հիվանդության ճիշտ վարման համար:

Ծանր սուր շնչառական վարակով պացիենտների մոտ կիրառեք հեղուկների տրման պահպանողական մոտեցում, երբ չկան շոկի նշաններ: Ազդեցիվ կերպով հեղուկների նշանակումը կարող է բերել օքսիգենացիայի վատթարացմանը, սա հատկապես վտանգավոր է, երբ մեխանիկական վենտիլյացիայի սարքերը լիմիտավորված են:

7. Ծանր COVID-19- ի վարում. Համակցված վարակների բուժում

- ✔ **Տվեք էմպիրիկ անտիբիոտիկներ՝ բուժելու համար բոլոր հավանական պաթոգենները, որոնք կարող են առաջացնել սուր ծանր շնչառական վարակ և սեպսիս:**

Նշում 1. Չնայած հիվանդը կարող է կասկածվել COVID-19- ի առումով, սակայն անհրաժեշտ է նշանակել համապատասխան էմպիրիկ անտիբիոտիկներ սեպսիսի հայտնաբերումից 1 ժամվա ընթացքում (5): Էմպիրիկ հակաբիոտիկային բուժումը պետք է հիմնված լինի կլինիկական ախտորոշման վրա (արտահիվանդանոցային թոքաբորբ, ներհիվանդանոցային թոքաբորբ կամ սեպսիս), տեղական համաճարակաբանական տվյալների և ազգային ուղեցույցների հիման վրա:

Նշում 2. Երբ առկա է սեզոնային գրիպի տեղական շրջանառություն, անհրաժեշտ է դիտարկել էմպիրիկ թերապիան նեյրամինիդազայի ինհիբիտորների միջոցով՝ գրիպով վարակված այն հիվանդների համար, որոնք ունեն ծանր հիվանդություն կամ ծանր հիվանդության ռիսկ (5):

- ✔ **Էմպիրիկ թերապիան պետք է դեէսկալացվի մանրէաբանության արդյունքների և կլինիկական դատողության հիման վրա:**

8. Կրիտիկական ծանր COVID-19- ով հիվանդների վարում. Սուր շնչառական դիսթրես համախտանիշ (ARDS)

- ✔ **Ճանաչեք ծանր հիպօքսեմիկ շնչառական անբավարարությունը, երբ շնչառական խանգարում ունեցող հիվանդը չի ենթարկվում ստանդարտ թթվածնաթերապիային և պատրաստվեք վենտիլյատոր օժանդակության:**
- ✔ **Էնդոտրախետալ ինտուբացիան պետք է իրականացվի վերապատրաստված և փորձառու մասնագետի կողմից՝ օգտագործելով օդային վարակից պաշտպանիչ միջոցներ:**

Հետևյալ առաջարկությունները վերաբերում են ARDS- ով մեխանիկական վենտիլյացիայի պայմաններում եղած մեծահասակ և մանկական տարիքի հիվանդներին (5, 31).

- ✔ Իրականացրեք մեխանիկական վենտիլյացիա՝ օգտագործելով ցածր շնչառական ծավալներ (4-8 մլ / կգ կանխատեսված մարմնի քաշին) և ցածր ներշնչման ճնշումներ (պլատոյի ճնշումը <30 սմ H₂O):
- ✔ Ծանր ARDS ունեցող մեծահասակների մոտ խորհուրդ է տրվում փորի վրա պառկած դիրքով վենտիլյացիա կատարել օրական 12–16 ժամվա ընթացքում:
- ✔ Կիրառեք հեղուկների տրման պահպանողական ռազմավարություն ARDS-ով հիվանդների համար, ովքեր չունեն հյուսվածքների հիպոպերֆուզիա:
- ! Միջին կամ ծանր ARDS ունեցող հիվանդների դեպքում առաջարկվում է բարձր PEEP –ի կիրառում՝ ցածր PEEP- ի փոխարեն:
- ! Միջին կամ ծանր ARDS ունեցող հիվանդների դեպքում ($PaO_2 / FiO_2 < 150$) շարունակական ինֆուզիայով նյարդամկանային բլոկադան չպետք է կիրառվի ռուտին կերպով:
- ✗ Հիվանդին վենտիլյատորից անջատելուց խուսափելը՝ վախենալով PEEP-ը կորցնելուց և աստելեկտազի զարգացումից սխալ միտում է:
- ✔ Կիրառեք հերմետիկ հարմարացված կաթետրներ շնչուղիների արտածման ժամանակ և փակեք (քլամփեք) էնդոտրախեալ խողովակը, երբ անհրաժեշտ է լինում դիսկոննեկցիա (օրինակ՝ փոխանցում դեպի տրանսպորտային վենտիլյատոր):

Հետևյալ առաջարկությունները վերաբերում են մեծահասակներին և մանկական տարիքի հիվանդներին ARDS- ով, որոնք բուժվում են ոչ ինվազիվ կամ high-flow թթվածնի համակարգերի կիրառությամբ:

- ! High-flow քթային թթվածինը (HFNO) պետք է օգտագործվի միայն հիպօքսեմիկ շնչառական անբավարարությամբ ընտրված հիվանդների մոտ:
- ! Ոչ ինվազիվ օդափոխումը (NIV) պետք է օգտագործվի միայն հիպօքսեմիկ շնչառական անբավարարությամբ ընտրված հիվանդների դեպքում:
- ! Հիվանդները, որոնք բուժվել են HFNO- ով կամ NIV- ով, պետք է սերտորեն վերահսկվեն կլինիկական վատթարացման նշանների առումով:

Ծանր սուր շնչառական վարակի (SARI) կլինիկական վարումը, երբ կասկածվում է COVID-19 հիվանդությունը. Միջանկյալ ուղղորդում (ուղղորդում, որը հիմնվում է առայժմ եղած տեղեկության վրա) V 1.2.

❗ Եթե պայմանները այնպիսին են, որ կան ECMO մասնագետներ, ապա դիտարկեք ռեֆրակտեր հիպօքսեմիայով հիվանդների ուղղորդումը դեպի ECMO-օժանդակության ճանապարհ:

9. Ծայրահեղ ծանր հիվանդության և COVID-19-ի վարում. Բարդությունների կանխարգելում:

Իրականացնեք հետևյալ միջամտությունները (աղյուսակ 4)՝ կանխելու համար ծանր հիվանդության հետ կապված բարդությունները: Այս միջամտությունները քաղված են Surviving Sepsis (5) կամ այլ ուղեցույցներից (52-55):

Աղյուսակ 4. Բարդությունների կանխարգելում

Ակնկալվող արդյունքներ	Միջամտություններ
Կրճատել ինվազիվ մեխանիկական վենտիլյացիայի օրերը	<ul style="list-style-type: none"> • Օգտագործեք հետվարժման պրոտոկոլներ, որոնք ենթադրում են ամենօրյա գնահատական ՝ ինքնուրույն շնչելու հնարավորության առումով • Նվազագույնի հասցրեք շարունակական կամ ընդմիջվող սեդացիան՝ թիրախավորելով հստակ նպատակ (թեթև սեդացիա, եթե դա հակացուցված չէ) կամ շարունակական սեդացիայի ինֆուզիայի ամենօրյա ընդհատում:
Նվազեցնել վենտիլյատոր-ասոցացված թոքաբորբի հաճախականությունը	<ul style="list-style-type: none"> • Բերանով ինտուբացիան գերադասելի է քթի ինտուբացիայից դեռահասների և մեծահասակների մոտ • Պահեք հիվանդին կիսանստած դիրքում (մահճակալի գլխամասը բարձրացնել 30-45°) • Օգտագործեք փակ ներծծող համակարգ: պարբերաբար չորացրեք և հեռացրեք խողովակների կոնդենսատը • Յուրաքանչյուր հիվանդի համար օգտագործեք նոր խողովակներ, իսկ երբ հիվանդը վենտիլյացվում է, փոխեք խողովակները, եթե դրանք աղտոտված են կամ վնասված են, բայց ոչ ռուտին կերպով: • Փոխեք ջերմա-խոնավա-փոխանակիչը, երբ կան անսարքություններ, կամ 5-7 օրը մեկ
Նվազեցնել երակային թրոմբոէմբոլիզի երևույթի դեպքերը	<ul style="list-style-type: none"> • Օգտագործեք դեղորայքային պրոֆիլակտիկա (ցածր մոլեկուլյար հեպարին կամ հեպարին 5000 միավոր ենթամաշկային օրական երկու անգամ) դեռահասների և մեծահասակների մոտ՝ ովքեր չունեն հակացուցումներ: Հակացուցում ունեցողների համար օգտագործեք մեխանիկական պրոֆիլակտիկա (ընդհատվող պնևմատիկ կոմպրեսիոն սարքեր):
